ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ՊՐԱՀԱՅՈՒՄ

(27 սեպտեմբեր – 3 հոկտեմբեր 2004 թ.)

Սույն թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 3-ը տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) Կենտրոնական Կոմիտեի նիստը Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայի Միջազգային Բապտիստական Աստվածաբանական Ճեմարանում:

ԵԵԿ-ի ղեկավար մարմինը, բաղկացած 40 անդամից, նախագահում էր պատվելի Ժան Առնոլդ դը Քլերմոնը (Ֆրանսիա): Փոխնախագահներն էին Տիրանայի և համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Արքեպիսկոպոս Գերաշնորհ Անաստասիոսը և Շվեդիայի Լյութերական Եկեղեցու առաջնորդ Վերապատվելի Մարգարեթ Այզբերգը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը. 2007 թ. գումարվելիք երրորդ Եվրոպական Էկումենիկ Ասամբլեայի առաջարկի վերաբերյալ վերջնական որոշման ընդունում, «Էկումենիկ վերակազմավորման» հատուկ հանձնախմբերի հաշվետվությունների քննարկում, դաշինքի և «դիակոնիայի» բնագավառներում ԵԵԿ-ի աշխատանքի վերանայում, ԵԵԿ-ի և գաղթականների համար Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի ինտեգրացիան: Կենտրոնական Կոմիտեն քննարկեց նաև ԵԵԿ-ի աշխատանքներին երիտասարդության մասնակցության և Եվրոպայում առաքելության և Եվրոպայի աշխարհայնացման խնդիրները:

«Կենտրոնական Կոմիտեի այս հանդիպումը խիստ կարևոր է,- ասաց ԵԵԿ-ի գլխավոր քարտուղար վերապատվելի Քեյթ Քլեմենթսը:- Մենք միաժամանակ անդրադառնում ենք մի քանի կարևոր խնդիրների, որոնք լուրջ ազդեցություն են ունենալու ԵԵԿ-ի հետագա ձևավորման և ուղղության վրա: Մենք ինքներս արդեն ընդգրկված ենք «Էկումենիկ վերակազմավորման» գործընթացում»:

Սեպտեմբերի 29-ին Կենտրոնական Կոմիտեի անդամներին նվիրված մի համերգ տեղի ունեցավ Սուրբ Նիկոլասի Հուսիտ եկեղեցում՝ Պրահայի կենտրոնական Հին Քաղաքային Հրապարակում, որին հաջորդեց Չեխիայի Հանրապետության Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի կազմակերպած հյուրասիրությունը: Հոկտեմբերի 1-ին ԵԵԿ-ի՝ Չեխիայի անդամ Եկեղեցիները քննարկում կազմակերպեցին Չեխիայի հասարակության աճող աշխարհայնացման և Եվրոխորհրդի ընդլայնման վերաբերյալ:

ՎԱՀԱԳՆ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԱՋԻՋՅԱՆ